


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
**Ե. ՓՈՐՈՍԵԱՆ**  
 ՎԱՍՏԱԿ ԿԱՍՏՈՒՆԻ ԵՎ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
 ՊԵՏԻ ԵՆՆԻՆԻ ԱՌ  
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ լրագրի  
 ԳԱՇԻՐԷ (Հասցեպահի)



ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ԵՎ ԳՐՈՒԹԻՒՆ  
 Տարեկան, ողջ գահկն. 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄԵՐ  
 Տարեկան Ֆրանկ 20  
 Վեցամսեայ » 12  
 ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՎ  
 ԵՎ ԳՐՈՒԹԻՒՆ ԵՎ ԳՐՈՒԹԻՒՆ  
 Խմբագրութեան վրայ:  
 Խմբագրութեան ուղղում  
 գրութիւնք եւ չեն արուր:

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

**Լ Ր Ա Գ Ի Ր**

**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

**ՊԱՐՈՆ ՏԵԼՔԱՍԵԻ  
 ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ**

Այսօր «Բօսիա» թերթը հետաքրքրական յօդուած մը կը հրատարակէ, զոր իրեն զրկած է իւր Փարիզեան թղթակիցը Պ. Փաւլօսիկի: Այդ յօդուածը համառօտութիւնն է այն խօսակցութեան, որ տեղի է ունեցեր Պ. Տէլքասէի, երկու ծերակուտականներու և մի երեսփոխանի միջև, մասնաւոր տան մը մէջ՝ որուն ներկայ է եղեր նաև Պ. Փաւլօսիքի:

«Անգղիամու!» կ'ըսէ, Պ. Տէլքասէ խընդարով և ուսերն վեր ցցելով: Ինչ կուզէք որ այդպիսի ծաղրելի խօսքերուն պատասխանեմ: Երբ մէկն իւր հայրենեաց արտաքին գործերով կ'զբաղի, նա պարզապէս ֆրանսացի է, աւանց կուսակցութեան մը պատկանելու: Նա ամէն ջանք ի գործ դնելու է իրեն յանձնուած պաշտօնն լաւ կատարելու: Յայտնի է թէ ես իմ քաղաքականութեանս և ոչ ուրիշին կը հետեւիմ: սպա թէ ոչ միևնոյն չէի լիներ: Խորհրդարանն ինձ իրաւունք կուտայ և այդ ինձ բաւական է:

Իսկ կ'ըսէ թէ Անգղիացիք թրանսվալի խնդիրը վերջացնելէ յետոյ, Պրանսայի դէմ պիտի դառնան, ես ատոր չեմ հաւատար: Բայց ենթադրենք թէ այդ այդպէս է — զի քաղաքականութեան մէջ ամենայն ինչ կարելի է — եթէ ուրիշն այդ է իրենց գաղտնի նպատակն, որոշեալ ժամանակին իրենց դէմ ելլողներ կը գտնեն: Անոնք չեն կրնար անգիտանալ թէ մեր գաղութներն լաւ պահպանուած են:

Ափրիկեան ծովեզերքներն, Մատակասգար, Հնդկաչին շատ աւելի զօրաւոր են քան մի տարի առաջ:

Մարօքի վրայ կը խօսին, այդ մասին ես իմ ճառիս մէջ պէտք եղածը ըսի: Մենք մտերմութեան մէջ ենք Սպանիոյ հետ և բնաւ միտք չ'ունինք Մարօք երթալու, բայց ուրիշին ալ չպիտի թողունք որ անոր դպչի:

Միւս կողմանէ Անգղիոյ գիտէ թէ մենք շահ մը չունինք իրեն դէմ պատերազմ բանալու, վասնզի իրմէ առնելու ոչինչ ունինք: Գաղթային տեսակէտով մենք պահպանողական ենք, մենք պէտք ունինք մեր

գաղութներն շահագործելու և ոչ զայնս ընդարձակելու: Ասկէ զատ, Ափրիկէի մէջ մենք գոնէ Անգլիացուց չափ, եթէ ոչ աւելի, երկիր ունինք: Խնդիրը տարբեր է Գերմանիոյ մասին, որ պէտք ունի իւր գաղութներն ընդարձակելու, իւր ձեռագործութեանց բազմանալուն համար:

Ես միայն մէկ պատճառ կը գտնեմ, որուն համար անգղիացիք փափաքին մեզ դէմ պատերազմ բանալ, Եւրոպական նաւատորմի զինուոր սարսափելի և կարելի իրարանցումին ժամանակ, Անգղիա կրնայ փափաքիլ մեր նաւատորմին ոչնչացնելու, անոր աւելի զօրաւոր լինելն առաջ: Բայց այդ պատերազմն կարծուածին չափ դիւրին չէ: Պատերազմ սկսելու համար պատճառ մը պէտք է: Ճաշտայի խնդրոյն ժամանակ, Անգղիա դիւանագիտական տեսակէտով, հաստատուն հողի մը վրայ կը գտնուէր, կարելի չէր բանակի մը դէմ 120 զօրք դնել: Ափրիկեան մեր ծովեզերքներն, այն ժամանակ նուազ զօրաւոր էին քան այսօր: Անգղիա իւր փնտած պատերազմի պատճառն չէր գտած:

Ուրիշ բան մ'ալ կայ, ծովային պատերազմի տեսակէտով, Եւրոպական բոլոր Պետութեանց մէջ սերտ կապ մը կայ: Կարելի է ոչնչացնել նաւատորմի մը: Սակայն եթէ 6 տարի հարկաւոր է բանակ մը վերակազմելու, քառօրը դարէ աւելի պէտք է՝ ծովային բանակի մը վերակազմութեան: Ուրեմն եթէ Անգղիա կարենար միւրիւնն ման նաւատորմի մը ոչնչացնել, իրեն շատ աւելի դիւրին պիտի լինի յետոյ, ուրիշներուն ալ ոչնչացնել, որոնք աւելի նոր լինելով նուազ զօրաւոր են:

Եթէ այդ սերտ կապակցութիւնն ալ գոյութիւն չ'ունենար, Անգղիա գիտնալու է որ, մենք այնքան պարզամիտ չենք որ թողունք մեր նաւատորմին ոչնչացնելու: Ուրեմն ինչ կրնայ ընել մեզ Անգղիա: Նա չ'կրնար յաւակնութիւնն ունենալ մեզի դէմ ցամաքային պատերազմ մղելու: Այնպէս չէ՞: Այդ պատերազմն Անգղիոյ համար մեծ ձախողութիւն մը պիտի լինէր, վասն զի իւր վաճառականութիւնն ծովային է, մինչ մերինն ցամաքային:

Այս ամէնքն զիս կուսմանորդեն Ռուսօ Պրանսական Դաշնակցութեան վրայ խօսելու, զոր ոմանք խախտած ըլլալ կը կարծեն: Եթէ ես ձեզ ըսէի թէ մեր յարաբերութիւններն շատ լաւ են, պարզ նախաքա-

սութիւն մը ըսած պիտի լինէի: Բայց աւելին կրնամ ըսել, բնաւ մեր յարաբերութիւններն այնքան մտերմական չեն, ի զած, որչափ այսօր:

Իմ ճառիս վերջին խօսքերն պարզ հաստատութիւններ չ'էին:

Իսկ զայն կրնաք գտնել « Journal de St. Pétersbourg » ի օգոստ. 7—8 թիւերուն մէջ: Մենք այլ ևս ցոյցեր ընելու պէտք չունինք, հարկաւոր չէ այլ ևս սիրահարներուն նման հարցնել: — Գիտ իր սիրե՞ս — Միւսին զգացումներն և միւսին շահերն, կ'ստիպեն մեզ իրարու հետ լաւ ապրելու և երկար ժամանակ ո՛հ, շատ երկար ժամանակ: Ապագայն զայդ պիտի ցուցնէ . . . Իմ անգղիամուտութիւնս շատ նոր լինելու է: Վասն զի ես չորս հարիւրի չափ յօդուածներ գրեր եմ ի նպաստ Պրանսոյ Ռուսական Դաշնակցութեան, և այնպիսի ժամանակ մը, յորում այդ բանը ծիծաղելի կը թուէր: Չորս հարիւր յօդուածներու մէջ ես կը ցուցնէի արգի մեր հետեւած քաղաքականութեան անհրաժեշտութիւնն:

Ես ոչ սպառնալեաց և ոչ ալ գրգռող քաղաքականութեան կը հետեւիմ: Թեթեւ սօրիկութիւնն ինձ համար բոլորովին պժգալի է, այն արժանի չէ մեծ ազգի մը, որ մեծ դեր մը խաղալ կուզէ աշխարհի մէջ: Ընդհակառակը ես կը ջանամ ամենուն գոհացում տալ:

Տեսէ՛ք Իտալիան, վերջին Պրանսօ-Իտալական վաճառականական դաշնակցութենէն ի վեր, Պրանսայի մէջ 10 միլիոնէն աւելի Իտալական ապրանք մտած է, իսկ Պրանսա 40 միլիոնէն աւելի ապրանք ներմուծած է Իտալիա:

Իբրև հետեւանք, սա վատ չէ:

ԴԱԻԻԹ-ԲԷԿ

**ՀԱՆՐԱԳԻՐ**

Արժանապատիւ  
 Փոխ-Տեղապահ Հայր Եգիպտակայոց  
 Ազաշնորդութեան  
 Ի Գահիրէ

Ստորագրեալներս, բնիկ եգիպտակայք, Սահմանադրապէս ընտրող եւ ընտրելի ճաշցուած եւ ազգայնութեան բոլոր պայմանները լրացուցած, պարտք կը համարինք ներկայ հանրագրով բողոքել ամսոյս 10 ին, կիրակի օրուան քուէարկութեան դէմ, որ պարզապէս կը նկատուի քառապնամայ

գոյութեամբ նուիրագործուած Ազգ. Սահմանադրութեան դէմ բռնաբարութեամբ եւ ոսնձգութիւնի գործ դրուած՝ վարչութեան գլուխն գտնուող կարգ մը անգէտ անձանց կողմանէ:

Ուստի, Փոխ-Տեղապահ Հայր, պարտք կը դնենք Ձեր վրայ, որ փութալով սոյն հանրագրին պարունակութիւնը նկատի առնել եւ գործադրել տալ ուժ որ անկ է:

1. Պէտք է որ պակասեալ և երեսփոխանացու անդամներն ընտրուին, ըստ առաջնոյն առ հասարակ ազգային սուրբ չվճարող ազգայնոց ալ կողմէն:

2. Եթէ ո՛չ, պէտք է որ լուծեալ հոշակութիւն այժմ ի պաշտօնի եղող 10 երեսփոխանները, որք, ինչպէս գիտէք, ընտրուած են սուրբ չվճարող ազգայնոց քուէնկրով:

Այս երկու հակասութեան մէջէն ելնելու միակ պայմանն եւ Սահմանադրութեան բռնաբարութեամբ տրամադրութեանց վերստին գործադրութեան միջոցներն են, բնական կրօնի օրուան կատարուած ձայնող քուէարկութեան արդիւնքն, եւ ձեռնարկել նորոգ ընտրութեան, հրաւիրելով եզրկատանայոց մէջէն անոնք, որ ընտրողի եւ ընտրելու պայմանները լրացուցած են ըստ Սահմանադրութեան, հոգ չէ՛ թէ վճարած չըլլան ազգային սուրբ անուն գումարը: Մեր սոյն պահանջը բնական է թէ՛ չպիտի վիրաւորէ Ձեր արժանապատուութեան փափուկ զգացումները, քանի որ Ազգ. Կեդրոնէն, Կ. Պօլսոյ Պատրիարքարանէն հոս զրկուած քանի՛ քանի լիազօր Գնորդներ եւ Առաջնորդներ ու Տեղապահներ երբէք պէտք չ'են տեսած հոս հաստատելու տուրքի վճարման անհարկի դրութիւնը, նոյն իսկ Ազգ. սնտուկին անձուկ ու տազնապալի կացութեան մէջ:

Ի դիմաց Սահմանադրութեան պահպանման նախանձախնդիր եզրկատանայոց:

Գահիրէ 14 Դեկտ. 1899

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Չարլս Վիլիամս, Միացեալ պետութեան պատերազմական գործերու ամենէն խելահաս անձնաւորութիւնը, «Մօրնիկ Լէտտեր» լրագրին մէջ կը համարձակի ըսել, որ Միքիլինկ այլևս ընդգիմանալու անկարող է, և թէ՛ գնդապետ Պէյտըն Փաուէլ անձնատուր ըլլալու հարկին մէջ պիտի գտնուի:

— «Նիւ Եօրք Հէրալտ» լրագիրը, որ Անգլիոյ ջերմ համակրողներէն է, կը հարցընէ Չէմպըրլէյնի թէ՛ արդեօք գո՛հ մնացե՞ր է իր պատճառաւ այժմ տեղի ունեցած պատերազմի արդիւնքներէն, որոնք հետեւեալ կերպով կը բովանդակուին. երկու ամսուան մէջ պատերազմական ծախս 280 միլիոն ֆրանք, 2200 զօրավար եւ զօրք մեռած և վիրաւորուած, 3400 անգլիացիներ գերի վարուած պօէրներու ձեռքը: Ընդամենը, 8600 մարդ կորսուած:

— Լոնտոնեան թղթակցութիւններէն կ'իմացուի որ հո՞ծ բազմութիւն մը կը դիմէ պատերազմական նախարարութեան, ծանօթանալու համար Մօտաւ Ռիվէր և Մաճէրս Թօնթէն տեղի ունեցած ճակատամարտներու մէջ մեռեալ և վիրաւորեալներու ցուցակին: Կ'ենթադրուի որ հարգուած տիղկութիւնները վստահելի չեն, և թէ վիրաւորեալներու թիւը գիտմամբ պակասեցուցուած են:

Հասարակաց կողմէ, մինչև իսկ, գովեստ կը լուրի Պօէրներու մարդասիրութեան վրայ և այն բարի վարմունքին զոր այս վերջինները

ցոյց տուին մինչև այսօր: Ամէն ոք գիտէ թէ ի՞նչպէս Մօտաւ Ռիվէրի պատերազմէն վերջ, ժէնէրալ Գրօնթի Պօէրները փորձեցին փնտռել գետին մէջ դիակները՝ քրիստոնէական թաղում մը ընել տալու համար անոնց: Աքանջայման արժանի վարմունք արդարեւ, զոր անգլիացի ժողովուրդը կը բաղդատէ Գափի Հօլանտացիներուն ընթացքին, որոնք վատութիւնը ունեցած են միանալու իրենց երկու հասարակապետութիւններու համարիւն եղալը:

— Հասարակաց խօսակցութեան մէջ ժէնէրալներն իսկ, պէտք է ըսել, քննադատուելէ հետի չեն: Անոնց անհատական քաջութիւնը չ'ուրայուիր, իրա՛ւ, բայց կը կարծուի սր ասոնք պատերազմական արհեստին բոլորովին անգիտակ են. իրենց քաջութիւնը զրէթէ ոչինչ՝ և ատակ անոնց միայն, որ ցայսօր գործ ունեցած ըլլան կիսավայրենի ժողովուրդներու հետ, եւ ըստական այժմեայ սպառազինութեանց անգիտակ:

— Սթորմֆելդի պարտութեան լուրը Լոնտոնի մէջ չէ ձգած այն սպաւորութիւնը որ սովորական է եւրոպայի մայրաքաղաքներուն, այսպիսի պարագաներու մէջ: Անգլիացիք խորունկ անզգայութիւն մը ցոյց կուտան. այնքան մեծ է իրենց վստահութիւնը որ մինչև իսկ իրողութիւնները ուրանալու չափ առաջ կ'երթան. յաղթութեան վրայ խօս հաւատ ունին, հոգ չէ թէ հակահարուածներու բօթաւէտ զօղանջները հասնին ականջներուն, որ խուճեանալ կ'ուզեն: Գեմքերը, սակայն, խոժոռ ձեւեր առած են. անսովոր հապճեպով վերջին լուրերը կը կարգացուին հանրակարգերու, շոգեկառքի և քիւպներու մէջ անբացատրելի լուրեր մը կը տեսնուի. այն է ըսել նախաքայլը ընդհանուր դժգոհութեան՝ որ վաղ կամ անագան պիտի պայթի, եթէ իրաց վիճակը շարունակուի վա՛յ այն պահուն Չէմպըրլէյններուն:

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թուսական «Վիտոսթի» լրագրին Սիմլաէն ստացած մի թղթակցութեան նայելով, Աֆղանիստանի սահմանագլխին վրայ կացութիւնը օր քան զօր կը վատթարանայ, ու «օղին մէջէն վառօդի և արիւնի հոտը կ'առնուի»: Ի զուր անգլիական և հնդկական մամուլը կը ձգտին ապացուցանել եւրոպայի, թէ Աֆրիտիսներու և ուրիշ ցեղերու խաղաղութեամբը այլևս ամէն բան վերջացած է. մինչդեռ հաստատ աղբիւրէ գիտեմ, կ'ըսէ թղթակիցը, որ այս նահանգին մէջ ապստամբութիւն մը շատոնց ի վեր սարքուելու վրայ է՝ մոխրի տակ թաքցուած, ամենափոքր պատրուակով երկրին մէկ ծայրէն միւսը պայթելու համար, անակալ և անուկի: Լեռնականները, այսօր, աւելի լաւ զինուած են քան թէ չորս տարի սուալ. իրենց հին ու ծթած գէնքերն սուսուեցան, և անոնց առջ Աֆղանիստանի պապարտներէն նորեր տրուեցան:

— «Մուսլիմաթ» մէջ կը կարդանք. Անգլիացի պատուիրակ գնդապետ Հարիսկըն Հապէչիստանէ կը վերադառնայ, հետն ունենալով Մէնէլիքի մի գիրը, որ Անգլիոյ թագուհւոյն ուղղուած է: Մէնէլիք կը յայտարարէ Թագուհւոյն, որ Մէթէմէ

և ձէլապաթ նահանգներն Հապէչիստանի կը պատկանին՝ և ոչ թէ Եգիպտական Սուսանին, և յոյս կը առնէ թէ Վեհ. Թագուհին պիտի զիջանի զանոնք իրեն վերադարձնելու:

Կ'ըսուի նաև, կը յարէ «Մուսլիմաթ», թէ՛ Մէնէլիք անակնկալ մը կը սարքէ Ալքիոնի գլխուն: Լաւատեղեակ բուրք քաղաքական անցած դարձածներու՝ ուշի ուշով կը հետեի Անգլիոյ և Թրանսլայի միջև այժմ տեղի ունեցած պատերազմի phase-րուն: Մէնէլիք, իր ծանօթ հեռատեսութեամբ, լաւ ըմբռնած ըլլալու է վտանգը՝ որ պիտի սպառնայ իրեն ալ, եթէ երբէք հարաւային Աֆրիկէէ բարձուի միակ խոչընդոտը, որ պահ մը կը կասեցնէ բրիտանական անդուստրիայի զարգացումը, այն է՝ Գափէն մինչև Գահիրէ տիրապետելու Չէմպըրլէնական տենլը:

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Կ. Պօլսոյ 20 Դեկտ.

Բ. Դուռը հետեւեալ շրջաբերականը ուղղած է Սուլթանի քեռայր Մահմուտ ձէլալէտային Փաշայի փախուստի մասին, օտար երկրաց մէջ գտնուող Թուրքիոյ ներկայացուցիչներուն:

«Մահմուտ Փաշա, որ ժամանակէ մը ՚ի վեր մոռային խանգարման նշաններ ցոյց կուտար, առանց հրամանի մեկնած է՝ իրեն հետ տանելով ձէմիլէ Սուլթանուհին երկու անչափահաս զաւակները:

«Ինչպէս որ մեր օրինաց համաձայն Սուլթանուհիներու տղաքը Օզոսու Վեհապետէն ուղղակի և բացարձակապէս կարուած ունին, և միւս կողմանէ Սուլթանուհին թախանձանօք կը պահանջէ իր երկու անչափահաս տղայքը, փափաքելի է որ Ձեր ազգու համարած ամէն միջոցներով մանրակրկիտ խուզարկութիւններ ընէք:

«Այն պարագային որ Մահմուտ փաշա Ձեր գտնուած երկիրը հասնի, ամէն կարող դիմումները ըրէք, որպէսզի ընդ հրակողութեամբ անմիջապէս Պօլսոյ զրկուի իւր երկու զաւակներովը, զորս առանց իրար ւունք ունենալու յափշտակած է:

«Կայսերական հրամանաւ հեռագրեցէք Ձեր ջանքերուն արդիւնքը»:

— Մահմուտ փաշա ձէլալէտային ժամանակաւ եղած է կրետէի ընդհանուր կուսակալ, գանձային նախարարութեան պետ և հանրօգուտ շինութեանց նախարար և ընդ Մահմուտ փաշա Փարիզի գեսպան Միւնիւր պէյի հայրն է:

22 Դեկտ. 99

Լոնտոնայի պատերազմական նախարարութիւնը կը ծանուցանէ որ ժէնէրալ Ուայթ՝ ամսոյս 18ին 7 մեռեալ և 14 վիրաւորեալներ ունեցած է:

23 Դեկտ. 99

Ուէմինսթէր գուքը մեռաւ Սթէրքսթրումէ հեռագիր մը կը ծանուցանէ որ Սթորմֆելդի ձայնողութեան հետեւանօք Պօէրներու ուժերը բազմապատուած են: Այս քաղաքի ամբողջ հիւսիսակողմը զինուած է:

— Ժէնէրալ Պիւլլէր հրաման ստացած է իսթ-քօրթ քաղաքի, ժէնէրալ Մէթուրն Օրէնճ Ռիվէր՝ և ժէնէրալ կաթաք՝ Գուինսթաուրն:

24 Դեկտ. 99

Տր. Լիյոս, տեսակցութեան մը մէջ, հաստատած է որ Պօէրները՝ երկարատեւ պատերազմի մը դիմանալու համար բաւականաչափ պաշար, զէնք և ուղղամիտներ ունին:

— Չորս հարիւր իրանտացի և Գերմանացիներ զօրք արձանագրուած են՝ Պօէրներու օգնութեան երթալու համար:

ԵՐՓԵՐ-ՎԵՐՔԵՐ

ՄԻ ՊԱՏԿԵՐ ԱՒԵՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ

Բ.

ԸՆԿԱՅԻՒՄ ՔԱՋԵՐՈՒՆ

Ո՛վ լուսի՛ն, լուսի՛ն, արի՛՛ քեզ պատմե՛մ քե ինչե՛ր անցաւ Հայաստան աշխարհն, այն քրտուա՛ն աշխարհն:

Ու դողդղալով ամպերու տակէն, դալկացած լուսին դուրս եկաւ տխուր, Անոր գունաթափ դալուկով որոշ շուրջըս նայեցայ. հառաչեցի՛ սուր:

Աւերակներուն մէջ կանգնած կիսամեռ ուրուականի պէս էի միայնակ. Շուրջս ցիր ու ցան փոռած դիակներ, վիրաւորի ճիւղ, բուրի աղաղակ. Ու սեւ գիշերը լրանալիս դաշտը սեւով էր պատնած սեւ սուգ կը հօտէր, Ա՛յն կենսալից դաշտ, ուր դեռ առաւօտ հիւղի ծրխանը սեւ ծուխ կը շնչէր: Իսկ այդ կախարդի մի շունչ էր կարծես պըտըտած ողջոյն այդ դաշտին վըրայ. Չար ոգիներու խօշական պարեր լրոյն կարծես թէ ժուռ գային հիմա:

Փալարուող մայրեր կրծքերուն սեղմած ծծկեր մանուկներ փոռած անկենդան, Աղերեկ վարսօք ծերուկներ լալկան կը խրոտվէին մահուան տեսարան. Դեռ կիսահագագ փողերէն որոշ տրեսուր կը լսուէր վերջին հրէնդին, Ու մի քիչ հեռուն մեռելաթաղի լապտերն ի ձեռին կը լսուէր թնդիւն. Հոս քաջ մ՛էր պառկած խոթոռած դէմքով բոռնցքը ուժգին կրծքին սեղմած դեռ. Կենդանի բողոք մ՛ըլլար, նա կանգնած թշնամուտն հանդէպ կարծես դեռ կոռէր. Հոն կոյս մ՛անկենդան վարսերն ցիր ու ցան ջլապինդ սեղմած սրտին իր պատիւ, Հրեշտակի նինջով կը ննջէր խաղաղ ուրբին տակ փրկած գաղաններ անթիւ. Հայրենի մատուռն սեւ սուգ էր մտեր, կիսափուլ որմէն երեւէր ճըրագ, Դժխեմ լոյսին տակ մեռելաթաղը լալով հողին տար հողն արագ արագ. Ու չի կար հնչող կոչնակը կերկեր, կամարին տակը կը լրուէր զանգակ, Շարական, սաղմոս, աղօթք, ալելու դաղրած էր վաղուց եւ սուրբ պատարագ. Բեմերուն վըրայ շար ի շար քաջեր, զոհուած քանանայք մընային անթաղ, Փոխան բաժակի անապակ գինուոյն կարմիր արիւնն էր անդ թափուած, աւա՛ղ՝ Քարերը արիւ՛ն, արի՛ւն որմերը, արեան ձայները բառնային բողոք. Այլ բաւ չի լինէր կարծես այդ արիւն կակուղ Աստուծուն սիրտը անողոք: Լափիլիզող ցոկօք պատռէին դիակը արեամբ շաղախուած շքերու վոհմակ, Եւ գերեզմանաց այցելու գորշուկը խնձոյք կաղմէին դիակէ դիակ. Աստ կորակըտուց անգղը սուր ճիրան լեարդ մը կրծոտէր կտուցը թաղած, Անդ արիւնըտուց բորեանն համարձակ ծրծէր անկեպի մ՛երակին կրպած: Ծիր ցան դեզացած այստեղ միս, ոսկոր, ջախջախուած գանկեր. Թեւ, ոտք ու կըզակ, Այնտեղ մահապիթ դէնքերը փոռած, ոսկորներու խոր ցցուած սուր նիզակ. Հեռուն ծրխային քաղաքներ, գիւղեր հրդեհի ծուխը կրպած ամպերուն, Ամայութեան մէջ բոցածախ սիտան հուրը կը լիզէր երես դաշտերուն. Ուր խրոտվ սրտով որդիներն Հայուն ջըլապինդ գրկած դըրօշներ յօշ յօշ, կրծքերուն սեղմած շար ի շար քաջեր նըզովք կ՛ոռնային, անէ՛ծք անորոշ . . . : Խարոյկներու շուրջ ստուերներ կարգ կարգ, շղթայ շտապող, դիակներու դէզ, Այլալլած գոնատ կոյս, հարս, ծեր, մանուկ սուրբ պատարագին պատրաստ ողջակէզ. . . : Ու դարձեալ մարդիկ արեամբ շաղախուած . . . դիւային քրքիւղ, ճիւղաղներու պար, ձենձերող բոցին շուրջը դառնային մարդագազաններ կազմած շրջապար, Մարդկային մըտով յափրացած զուարթ արիւնը Հայուն, ա՛խ, դինի ըրեր, Ուրախ խրմէին, կայթէին զուարթ, վայրենաբարոյ Մէհմէտի ճորտեր. Ու ծուխը ծրփար ու՛ր, բարդ ի բարդ հայրենի երկնից կուտուրով ճակատ, Հրդեհի հրաչէկ բոցերուն ծոցը երբեմնեան դրախտն կ՛ըլլար անապատ. Հրդեհ ու աւե՛ր . . . բոցավառ երկրի խորերէն կուգար ճիւղ, աղաղակ խուլ, Լերանց գողաւոր փորոքներուն մէջ կ՛երթար ու կուգար արձագանքն անդուլ. Կը պոթկար գեհնն, կը բացուէր դժոխք, Հայուն երկիրը կ՛ըլլար քանդ ու քար Քանդելով ողջոյն Հայաստանն անտէր չը թողլով կանգնիլ քարին վրայ քար. . . :

Ու չըկա՛ր Աստուած, վերը քո՛ւն էր այն, ծուխի ձենձերի շունչէն դիտովցած . . . Մարտիրոս Հայուն արեա՛ն ծարաւին. . . : Ո՛վ գիտէ, թերե՛ւս, ժպտա՛ր ալ Աստուած. . . :

Խոտվեցա՛ւ ի տես ասոնց լուսնակը. աչքերը պղտո՛ր, պղտո՛ր գետք դարձան, Թուխ թուխ ամպիկներ ճակտին սեւ լաջակ սրգաւոր քաշեց դալուկ լուսնիկայն, Ու մի քիչ յետոյ արագ բարդ ի բարդ ամպե՛ր ծածկեցին . . . : Երկինքը լացա՛ւ. . . : Այն օրէն ի վեր սգուր լուսնիկայն մեր սգուր երկրին վրայ ման չ՛եկաւ . . . : Ազեքսանդրիա Ա.ՎՕ

Վասպուրականի Որբախնամ ընկերու- թեան Պատ. Գործ. Ժողովը հետեւեալ գրու- թիւնն ուղղելով մեզ, անոր հրատարակու- թիւնը խնդրած է .

. . . Խմբագիր

Վասպուրականի Որբախնամ ընկերու- թեան Գործ. Ժողովը, պատիւ ունի յայ- տարարել Ձեզ թէ՛ նկատելով որ քաղաքիս մէջ երկու Որբախնամ ընկերութիւններ գո- յութիւն ունին, որքան որ միեւնոյն նպա- տակաւ հիմնուած, սակայն տարբեր անուն- ներու տակ, տարբեր վարչութեամբ ու գոր- ծունէութեամբ, և նկատելով որ Պատ. թեր- թիգ մէջ մերթ որբախնամ գործոց յատ- կացուած գրութեանց մէջ չ՛ընտուր վե- ռոյիչեալ երկու Որբախնամներու նոյնու- թիւնը, որով անդամներու միջև թիւրիմա- ցութիւն տեղի կունենայ, կը խնդրէ որ յետ այսու հաճիք ի նկատի առնել յիշեալ կէտը, և իւրաքանչիւր Որբախնամ իր մկրտուած անուամբ յիշել (1):

Ընդունեցէք, . . . Խմբագիր, մեր յար- գանաց հաւաստին :

Գիւան Գործագիր Ժողովոյ Ատենադպիր Ատենապետ Լ. Ա. ԲԱՄՊՈՒՔՃԵԱՆ Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՀԱՐՑՈՒՄ ՍԸ

Լրագրաց մէջ կը տեսնուի ազգարարութիւն մը, ըստ որում վենետիկեան հարց գրեթէ պաշ- տօնական թերթն եղող Բազմալիկ, ի նպատակ «Հայ որբիկներուն քացատիկ պրակ մը» սլոտի հրատա- րակէ «պատկերազարդ» որուն լայնքն ու երկայն- քը եւ ծաւալը մի առ մի բացատրուած, պարու- նակութիւնը «ուշագրաւ, հետաքրքրական եւ օգ- սակար յօդուածներ» ըսուած, գնոյն 2,50 ֆրանք ըլլալը ծանուցուած եւ մէն մի տողը 25 ասնթի- մէն ծանուցումներ ալ ընդունուելիքը յայտա- րարուած է :

«Պիտի տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներու : Բաժանորդագրաց անունն եւ ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հաս- նի հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատ- կացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տրու- ուին Բազմալիկ պրակներուն մէջ :» Յարաժամ մեր յեղիցած Հայրենասիրութիւն բառին անկեղծութիւնն ապացուցանելու համար լաւագոյն միջոց մը գտնիլ դժուարին է : Ուստի կը խնդրենք բոլոր հայրենակիցներէն առանց խըտ- րութեան լեզուի եւ դաւանանքի որ հաճին օժան-

(1) Մեր թերթին մէջ խնդրոյ առարկայ եղած Որբախնամի գործոց մէջ «Վասպուրական» անունը գործածուած չէ կարծենք, եւ այդ բաւ է հաս- տատելու թէ ըսուածները Վասպուրականի Որբա- խնամին չեն վերաբերիր : Խ.

ԼԱ ՄԻ ԶՈՒՄԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎ ԱՓՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՃԽԱՐՅԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա- բաժինները : Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպատակ իրենց գումարած է 3 ՄԻԼԻՈՆ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է : Ս. ԼԷՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւն- ներ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ : ԱԼԼԻՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յԱզեքսանդրիա :

զակել վերապատուելի Հարց. թէ եւ մի քիչ ուշ, բայց վերջապէս խիստ գովելի ձեռնարկին:

Միւս կողմէն, արդեօք յանդգնութիւն կ'ըլլայ հարցնել յիշեալ յարգելի միաբանութեան թէ այդ բացառիկ պրակը ե՞րբ եւ քանի՞ քան հազար օրինակ պիտի տպուի, գոյացած գումարէն մաս մը պիտի յատկացուի թէ ոչ իբր սպառական ծախս եւայլն, մնացածը ո՞ր քաղաքացի արքանոցներուն պիտի յատկացուի եւ որո՞նց միջոցաւ պիտի բաժնուի, եւ միթէ կարելի չէ՞ ի սէր որբոց՝ պրակին գինը նուազեցնել, զայն ամեն քաակի մատչելի ընելով հասոյթն աւելցնելու եւ թող տալու որ աւելի բազմաթիւ անձինք կարող ըլլան բարեգործութեան մը երանութիւնը վայելելու:

Գահիրէ 24/12/99

9.

... Խորագիր:

Մէկ երկու շաբաթ կ'ըլլայ, որ մեր Գահիրէի երեսփոխանական ընտրութեանց վերաբերեալ զըր-ւածներ կը տեսնենք «Արշալոյս»ի մէջ: Այդ թող-թակցութեանց հեղինակներն շատ իրաւունք ունին: Եւ ալ ազգային անհատ զը իմ իրաւունքս ունենալով կուգամ իմ կարծիքս յայտնելով, տեղ-ւոյս ազնիւ ժողովրդեան զատողութեանը ձգել:

Տիար Կ. Միհանօֆ կը գրէր թէ՛ պէ՛տք է Ազգ. քառորդիսցիք ալ ընտրեն եւ ընտրուին որ օրինաւոր ըլլայ երեսփոխանական վարչութիւնն, — այս շատ ճիշդ է: Եւ ասկէ զատ ալ տեղա շատ մը հայեր կան ընդ որս եւ ստորագրեալս որ շատ տարիներէ ի վեր հոս հաստատուած են եւ ընտանիք ու զաւակներ ունին, ո՛չ ազգային տուրք վճարելու հրաւիրուած են եւ ոչ ալ երեսփոխանական ընտրութեան մասնակցելու: Արդեօք ինչո՞ւ:

Եթէ ըսեմ որ Երեսփոխանները չեն պիտի տեղ-ւոյս ժողովուրդին որչափ ըլլալը, ասիկա իրենց մեծ պակասութիւն մ'է. եթէ ըսեմ որ սեղուոյս քահանաները չեն գիտեր, նորէն միայն զպիտի ըլլամ, որոշեալ տեղ-ւոյս գիտեն իրենց ծովներն, քանի որ իրենց շահուն համար տարին երկու անգամ տունները այցելութիւն կուտան Արդեօք ինչո՞ւ, տօմար չունին, որ այս մե՛ծ մեծ պակասութիւնները կը գործուին եւ այս պէնը տեսնալով՝ ես համակարծիք եմ Տիար Կ. Միհանօֆին որ՝ մինչեւ որ տեղ-ւոյս եւ Ազգ. քառորդիոյ երեսփոխանները օրինապէս չ'ընտրուին, ներկայ երեսփոխանները կիսկատար են ըստ Մասնաճարտութեան օրինաց: Ուրեմն ով որ ունի ազգային արիւն թող խօսի ճշմարտութիւնը:

Գուպպէ 24 Դեկտ. 99

Ն. ՆԱԶԱՐԵԱՆ

Ա.Ձ.Գ.

Չմեռուան ցրտասարսուռ եղանակին մէջն ենք, ու այսօր, աւելի քան երբէք, այն խեղճ որբերը զոր պաշտպանելու գովելի ձգտումն ունինք՝ պէտքը պիտի զգան մեր գթառատ կարեկցութեան:

Որբասիրաց ընկերութիւնս, քաջ գիտնալով այս տխրալի իրողութիւնը, կը փափաքի գործնականապէս մեղմացնել անոնց կացութեան դառնութիւնը՝ իր մաս գրտնուած գումարն անմիջապէս գործածելով իր նպատակին:

Հետեւաբար, առժ. Գործ. ժողովս, ուզելով այդ գումարը կարեոր քանակութեան մը հասցնել, կուգայ խնդրել ընկերութեան արգոյ անդամներէն, որ եթէ կարելի ըլլայ՝ մի կամ երկու ամսաբաժնի կանխավճար մ'ընելու ազնուութիւնն ունենան, որուն համար կանխապէս շնորհակալութիւն կը յայտնենք յանուն որբերուն:


Ապրիլն որբասէրները:

Առժ. Գործադիր ժողովոյ Ատենադպիր Ատենապետ Ա.ՊԱ.Հ Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ

Վ. Ա. ՃԱՆՈՒՍՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԴ

ՇԱՐԷ-ԱՊՏԻԻ-Ա.ՉԻ.Չ



Թէյի գործածութեան ընդհանրանալովն, թէյի ճաշակն եւ նրբացած է. որով թէյի առևտուրն վաճաղականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատեւ և ճոխ առևտուրէ յառաջ և կած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քանակաւ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր 21-ՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԴԻԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձըմնուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գեղարտի հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քաակի դիւրամատչելի են:

Թէ Կ. Պօլոյս և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վատահոլութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու օտարի, կօխի եւ զնոց մասին:

Մեծաքանակ թէյ փոքրաքանակ մեզի եղած կԱՆԻՅԻ գրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

3 — 50

ԻԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿիրԱԿԻ 24 Դեկտեմբեր 1899

Ա. Թիւ	7429	չահած է	Ֆրանք	1000
Բ. "	708	"	"	200
Գ. "	568	"	"	100
Դ. "	6584	"	"	50
Ե. "	4637	"	"	50

Հետեւեալը 25 ական ֆրանք կը շահին

9385	6030	4309	5774	4268	9432
4671	4157	2590	706	363	5473
4839	2772	5834	3700	200	9156
6538	7243	2394	7869		

ԵՄՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, ընկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԻՆԵԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՎ ՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿԻՐԱԾ

Գ. Ա. ՀԻՄԷՆԻ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՀԻՄԷՆԻ

Ս. Ե. Ս. Սեհնավի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնաօլի ընտիր տեսակէ բանտիւներու մեծ մթերք:

ԴԻՄԵՏԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, արծաթ եւ ցիւրի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանց ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, օղբներ, մասանիներ եւայլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ

42—50

ԿԱՐԵՒՈՐ Ա.ՉԳ

Ամենափափուկ ստամոքս ունեցողներուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ գիմել

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Օռօգի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեհաթի ցիւր դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախողներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փութին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փութին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաններ կայն:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ և փութով կը կատարուին:

16—50

Le Gérant Dr A. S. HAGOPIAN